թեսցի և ուսումնասիրեսցի ամենայն զինուորս ընակեալ 'ի յերեսս երկրի վիճակին երևանու, և տուաք հրաման քեզ 'ի ժամանակի խաղաղութեան և պատերազմի ամենայն շաբաթի ընծայեսցես լուր կացութեան աշխարհին և կառավարութեան քոյ 'ի դրունս տանն հայոց, և կալով մնասցես 'ի վերայ պաշտօնի իշխանութեան վիճակի քոյ հաւատարիմ տանն հայոց, գրուեցաւ 'ի դրունս և այլն։

Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին.

Մ. Ի. ○
Մ. Գ. ○

Ս. Տ. ○
Վ. Տ. ○
Գ. Տ. ○

Օրինակ Ուխտադրութեան։

ԳԼՈՒԽ ՁԱ.

Յայտնի լինի ամենեցուն, որ ես Սողոմոն որդի Մինասայ գանձակու վաճառականս, և հայրապետ որդի Միքայէլի ճարաբերթու հովիւս միասին ուխտ եղաք և միջի մերոյ դաշինս հաստատեցաք, որ ես Միքայէլ հովիւս պարտական արարի իմ անձն և կտակակատար և ամենայն ստացուածքն Տեառն հայրապետ որդոյ Միքայէլի որ ներքոյ թուէն վեց ամիս ժամանակաւ 'ի քա-